ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

«Հաստատում եմ»
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
Ռ. Սարգսյան
«01» 03.2024թ.

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական սկզբունքները

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պետական բժշկական քոլեջի շահակիցների կարիքների և բավարարվածության գնահատման քաղաքականությունը ձևավորվել է որակի կառավարման միջազգային ճանաչված պրակտիկաների հիման վրա, հատկապես՝ ՊԻՍԲ (Պլանավորում–Իրականացում–Ստուգում–Բարելավում) սկզբունքի կիրառմամբ:

ՊԻՍԲ-ը (PDCA-ն) թույլ է տալիս՝

- պլանավորել գործընթացները,
- իրականացնել տվյալները հավաքելու մեխանիզմները,
- ստուգել արդյունքները և վերլուծել,
- կատարել բարելավումներ կրթական ծառայությունների որակի բարձրացման համար:

2. Նպատակի և խնդիրների սահմանում.

Սույն քաղաքականության նպատակն է՝ սահմանել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պետական բժշկական քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքների, սպասելիքների և բավարարվածության բացահայտման, գնահատման և վերլուծության մեխանիզմները՝ կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավումն ապահովելու նպատակով:

Խնդիրներն են՝

- Բացահայտել կրթական ծրագրերի արդիականության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ շահակիցների սպասելիքները:

- Գնահատել ուսումնական միջավայրի, նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսների համապատասխանությունը:
- Ուսումնասիրել կրթական գործընթացի արդյունավետությունը և ուսուցման որակի մակարդակը:
- Ապահովել շահակիցներից ստացված հետադարձ կապի թափանցիկ, համակարգված և արդյունավետ օգտագործումը:

Գործընթացի հիմքում ընկած է որակի կառավարման PDCA (Պլանավորում-Իրականացում-Ստուգում-Բարելավում) սկզբունքը:

2. Շահակիցների սահմանումը

Ներքին շահակիցներ	Արտաքին շահակիցներ
Ուսանողներ	Գործատուներ (բժշկական կենտրոններ, դեղատներ)
Դասախոսական կազմ	Շրջանավարտներ
Վարչական և սպասարկող անձնակազմ	Դիմորդներ և նրանց ծնողները
	Պետական լիազոր մարմիններ (ԱՆ, ԿԳՄՄՆ)

3. Կարիքների և բավարարվածության բացահայտման մեխանիզմները

Շահակիցների կարիքների և բավարարվածության գնահատումը իրականացվում է հետևյալ մեթոդներով՝

- Հարցումներ (առցանց կամ թղթային):
- Խմբային քննարկումներ և կլոր սեղաններ:
- Անհատական և խմբային հարցազրույցներ:
- Ուսումնական արդյունքների, պրակտիկայի և զբաղվածության տվյալների վերլուծություն:
- Առաջարկությունների, դիմումների և բողոքների ուսումնասիրություն:
- Հետադարձ կապի արկղ/էլեկտրոնային հարթակ:

4. Գնահատման պարբերականությունը

Շահակիցների բավարարվածության գնահատումն իրականացվում է պարբերաբար՝ առնվազն տարին մեկ անգամ կամ անհրաժեշտության դեպքում՝ ըստ Քոլեջի ղեկավարության որոշման:

5. Արդյունքների վերլուծություն և բարելավման գործողություններ

- Հավաքագրված տվյալները ենթարկվում են վերլուծության,
- Վերլուծության արդյունքների հիման վրա մշակվում են կրթական գործընթացի և կառավարման բարելավման գործողությունների ծրագրեր,

- Իրականացվում է ընդունված միջոցառումների մոնիթորինգ և գնահատում:

6. Պատասխանատվություն

Քաղաքականության իրականացման, տվյալների հավաքագրման, վերլուծության և արդյունքների ներկայացման համար պատասխանատու են Քոլեջի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները՝ տնօրենի կամ ԲԿ ՓԲԸ-ի տնօրենի կողմից սահմանված կարգով:

7. Արդյունքների կիրառումը

Յուրաքանչյուր հարցման ավարտից հետո 15-օրյա ժամկետում կազմվում է վերլուծական հաշվետվություն: Հաշվետվությունը ներկայացվում է Քոլեջի տնօրինությանը և Մանկավարժական խորհրդին:

Վերհանված խնդիրների հիման վրա կազմվում է բարելավման գործողությունների պլան: Եթե ուսանողների ավելի քան 30%-ը դժգոհ է կոնկրետ ռեսուրսից կամ մեթոդից, Քոլեջը պարտավոր է ձեռնարկել անհապաղ փոփոխություններ: Արդյունքները և կատարված բարելավումները հրապարակվում են Քոլեջի կայքում կամ տեղեկատվական վահանակներին: Վերհանված կարիքները պետք է հիմք հանդիսանան.

- Քոլեջի կրթական, ռազմավարական ծրագրերի վերանայման համար:
- Դասախոսների վերապատրաստման թեմաների ընտրության համար:
- Նյութատեխնիկական բազայի թարմացման համար (լաբորատոր սարքավորումներ, գրականություն):

Շահակիցների հետադարձ կապն օգտագործվում է ամբողջ գործընթացի ընթացքում՝ ոչ միայն գնահատման, այլև բարելավման համար:

8.Գործողությունների օրինակելի ժամանակացույց

Փուլ	Գործողություն	Ժամկետ
I	Հարցաշարերի թարմացում և հաստատում	Սեպտեմբեր
II	Ներքին շահակիցների հարցումներ	Դեկտեմբեր / Մայիս
III	Արտաքին շահակիցների հարցումներ	Մարտ-Ապրիլ
IV	Հաշվետվության կազմում և քննարկում	Հունիս
V	Ռազմավարական փոփոխությունների ներդրում	Օգոստոս

Հավելված 1

ՀԱՐՑԱՇԱՐ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հարգելի՛ ուսանող, Քոլեջի կրթական որակի բարելավման նպատակով իրականացվում է այս հարցումը: Ձեր անկեղծ կարծիքը չափազանց կարևոր է ինստիտուցիոնալ գործընթացում թերությունները վերհանելու և ծառայությունների որակը բարձրացնելու համար:

Հարցումն անանուն է, արդյունքներն օգտագործվելու են միայն ընդհանրացված տեսքով:

Բաժին 1. Ընդհանուր տվյալներ

1. *Նշեք Ձեր սեռը՝*
2. *Նշեք Ձեր մասնագիտությունը՝* _____
3. *Նշեք որ կուրսում եք սովորում՝* _____

Բաժին 2. Կրթական ռեսուրսներ և նյութատեխնիկական բազա

Յուրաքանչյուր հարցի դիմաց անհրաժեշտ է նշել բավարարվածության աստիճանը 1-5 բալային համակարգով (որտեղ՝ 1 – Լիովին դժգոհ եմ, 2 – Դժգոհ եմ,3 - Չեզոք/Դժվարանում եմ պատասխանել, 4 – Բավարարված եմ, 5 – Լիովին բավարարված եմ):

2.1. Լսարանների հարմարավետությունը և կահավորումը

2.2. Լաբորատորիաների և կաբինետների հագեցվածությունը բժշկական սարքավորումներով:

2.3. Գրադարանի հասանելիությունը և մասնագիտական գրականության առկայությունը

2.4. ՏՀՏ (համակարգիչներ, համացանց) հասանելիությունը:

2.5. Ուսումնամեթոդական նյութերի (դասախոսություններ, ուղեցույցներ) որակը

Բաժին 3. Կրթական և վարչական խորհրդատվություն

Յուրաքանչյուր հարցի դիմաց անհրաժեշտ է նշել բավարարվածության աստիճանը 1-5 բալային համակարգով (որտեղ՝ 1 – Լիովին դժգոհ եմ, 2 – Դժգոհ եմ,3 - Չեզոք/Դժվարանում եմ պատասխանել, 4 – Բավարարված եմ, 5 – Լիովին բավարարված եմ):

3.1. Դասախոսների կողմից տրամադրվող մասնագիտական խորհրդատվությունը:

3.2. Ուսումնական մասի կողմից տեղեկատվության տրամադրման օպերատիվությունը:

3.3. Կարիերայի ուղղորդման և պրակտիկայի կազմակերպման աջակցությունը:

3.4. Բողոքների և առաջարկների ներկայացման մեխանիզմների հստակությունը:

3.5 Քոլեջի տնօրինության հետ աշխատանքային շփումների հասանելիությունը և արձագանքման ձևերը, որակը և ժամկետները:

Բաժին 4. Դասավանդման որակ և գնահատում

Յուրաքանչյուր հարցի դիմաց անհրաժեշտ է նշել բավարարվածության աստիճանը 1-5 բալային համակարգով (որտեղ՝ 1 – Լիովին դժգոհ եմ, 2 – Դժգոհ եմ,3 - Չեզոք/Դժվարանում եմ պատասխանել, 4 – Բավարարված եմ, 5 – Լիովին բավարարված եմ):

4.1. Գործնական հմտությունների ուսուցման արդյունավետությունը:

4.2. Գնահատման չափանիշների թափանցիկությունը և արդարացիությունը:

4.3. Դասախոսների վերաբերմունքը և էթիկական նորմերի պահպանումը:

Բաժին 5. Ընդհանուր միջավայր և ծառայություններ

Յուրաքանչյուր հարցի դիմաց անհրաժեշտ է նշել բավարարվածության աստիճանը 1-5 բալային համակարգով (որտեղ՝ 1 – Լիովին դժգոհ եմ, 2 – Դժգոհ եմ,3 - Չեզոք/Դժվարանում եմ պատասխանել, 4 – Բավարարված եմ, 5 – Լիովին բավարարված եմ):

5.1. Քոլեջի սանիտարահիգիենիկ վիճակը (մաքրություն, սանհանգույցներ):

5.2. Սննդի կազմակերպման/ճաշարանի ծառայությունների որակը:

5.3. Քոլեջի կայքից և սոցցանցերից ստացվող տեղեկատվության որակը:

Բաժին 6. Ընդհանրական հարցեր

6.1.Արդյո՞ք խորհուրդ կտաք այս քոլեջը Ձեր ընկերներին – Այո, Ոչ, Դժվարանում եմ պատասխանել

6.2. Ո՞րն է Քոլեջի ամենաուժեղ կողմը (ըստ Ձեզ):

_____

6.2.Ի՞նչը կփոխեիք կամ կբարելավեիք Քոլեջում առաջնահերթ կերպով:

_____

Հավելված 2

ՀԱՐՑԱՇԱՐ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

Հարգելի՛ գործընկեր, Խնդրում ենք մասնակցել սույն հարցմանը, որի նպատակն է վերհանել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի պետական բժշկական քոլեջի ուսումնական գործընթացներին առնչվող խնդիրները և գտնել դրանց լուծման լավագույն ուղիները: Ձեր մասնագիտական փորձը և օբյեկտիվ կարծիքը վճռորոշ են այս հարցում: Հարցման արդյունքերը հնարավորություն կտան մեզ վերհանել առկա խնդիրները, պարզել մեր ուժեղ կողմերը և բարելավել ուսումնական գործընթացի որակը:

Հարցումն ամբողջությամբ անանուն է: Ձեր տվյալները չեն հավաքագրվում, իսկ արդյունքները կվերլուծվեն միայն ընդհանրացված տեսքով:

Հարցաշարը լրացնելը կխլի մոտ 7-10 րոպե:

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում համագործակցության և մեր քոլեջի կրթական որակի բարձրացման գործում ներդրում ունենալու համար:

Բաժին 1. Ընդհանուր տեղեկություններ

Այս բաժինը պետք է լինի հնարավորինս հակիրճ՝ անանունությունը չխաթարելու համար: Տվյալները կիրառվելու են բացառապես վիճակագրական վերլուծության նպատակով:

1. **Դասախոսի աշխատանքային ստաժը քոլեջում.**
   - Մինչև 5 տարի
   - 5-10 տարի
   - 10 տարուց ավելի
2. **Դասավանդվող առարկայախումբը.**
   - Ընդհանուր բժշկական (անատոմիա, ֆիզիոլոգիա և այլն)
   - Նեղ մասնագիտական (քույրական գործ, մանկաբարձություն և այլն)
   - Հումանիտար, հասարակագիտական և ընդհանուր բնագիտական
3. **Աշխատանքի բնույթը քոլեջում.**
   - Հիմնական հաստիքային աշխատող
   - Ներքին համատեղությամբ աշխատող (օրինակ՝ հիվանդանոցի գործնական բժիշկներ, ովքեր նաև դասավանդում են)
   - Արտաքին համատեղությամբ աշխատող (օրինակ՝ այլ դպրոցի, քոլեջի, հիվանդանոցի կամ հաստատության աշխատող)
4. **Գիտական աստիճանի/կոչման առկայությունը.**
   - Ունեմ գիտական աստիճան/կոչում
   - Չունեմ գիտական աստիճան/կոչում
5. **Վերջին 3 տարում մասնագիտական վերապատրաստման մասնակցությունը.**

   Անցել եմ վերապատրաստում քոլեջի միջոցով/աջակցությամբ

   Անցել եմ վերապատրաստում սեփական նախաձեռնությամբ

   Վերջին 3 տարում չեմ վերապատրաստվել

Բաժին 2. Նյութատեխնիկական բազա և ուսումնական միջավայր

Յուրաքանչյուր հարցի դիմաց անհրաժեշտ է նշել բավարարվածության աստիճանը 1-5 բալային համակարգով (որտեղ՝ 1 – Լիովին դժգոհ եմ, 2 – Դժգոհ եմ,3 - Չեզոք/Դժվարանում եմ պատասխանել, 4 – Բավարարված եմ, 5 – Լիովին բավարարված եմ):

2.1. Տեխնիկական հագեցվածություն. Ինչպե՞ս կգնահատեք լսարանների (այդ թվում նաև ԲԿ-ի) տեխնիկական հագեցվածությունը (պրոյեկտորներ, համակարգիչներ, կայուն ինտերնետ կապ):

2.2. Մասնագիտական սարքավորումներ. Որքանո՞վ են քոլեջի լաբորատորիաները և սիմուլյացիոն կաբինետները հագեցած անհրաժեշտ մուլյաժներով ու բժշկական գործիքներով:

2.3. Գրադարանային ֆոնդ. Որքանո՞վ է առկա մասնագիտական գրականությունը (տպագիր և էլեկտրոնային) համապատասխանում ժամանակակից բժշկական չափորոշիչներին:

2.4. Կլինիկական բազաների հասանելիություն. Որքանո՞վ է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի կլինիկական միջավայրը հասանելի և հարմարեցված ուսանողների գործնական պարապմունքների համար:

2.5. Ուսումնական նյութերի բազա. Արդյո՞ք քոլեջն ապահովված է բավարար քանակի դիտակտիկ պարագաներով (պլակատներ, սխեմաներ, ուսումնական տեսանյութեր):

2.6. Աշխատանքային պայմաններ. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր աշխատանքային միջավայրը (դասախոսների սենյակ, հանգստի գոտի, ջեռուցում/օդափոխություն):

2.7. Էլեկտրոնային հարթակներ. Որքանո՞վ են արդյունավետ քոլեջում կիրառվող էլեկտրոնային կառավարման կամ ուսուցման համակարգերը (էլեկտրոնային մատյաններ, Google Classroom և այլն):

2.8. Անվտանգություն և սանիտարահիգիենիկ վիճակ. Ինչպե՞ս կգնահատեք քոլեջի ընդհանուր մաքրությունը, սանհանգույցների վիճակը և անվտանգության կանոնների պահպանումը:

2.9. Սննդի կազմակերպում. Որքանո՞վ են բավարարված դասախոսների և ուսանողների սննդի կազմակերպման համար առկա պայմանները (բուֆետ, ճաշարան):

2.10. Ներառականություն. Արդյո՞ք քոլեջի շենքային պայմանները հարմարեցված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿՈՒ) կամ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար (թեքահարթակներ և այլն):

Բաժին 3. Որակի ներքին ապահովում և Կառավարում

Յուրաքանչյուր հարցի դիմաց անհրաժեշտ է նշել բավարարվածության աստիճանը 1-5 բալային համակարգով (որտեղ՝ 1 – Լիովին դժգոհ եմ, 2 – Դժգոհ եմ,3 - Չեզոք/Դժվարանում եմ պատասխանել, 4 – Բավարարված եմ, 5 – Լիովին բավարարված եմ):

3.1. Հետադարձ կապ. Որքանո՞վ է քոլեջի տնօրինությունը պատրաստակամ լսելու և հաշվի առնելու դասախոսների բարձրացրած խնդիրներն ու առաջարկությունները:

3.2. Թափանցիկություն. Որքանո՞վ են թափանցիկ և հասկանալի քոլեջում կայացվող վարչական որոշումները (հրամաններ, կանոնակարգեր, փոփոխություններ):

3.3. Մասնագիտական աճ. Որքանո՞վ է քոլեջը նպաստում և խթանում Ձեր մասնագիտական վերապատրաստումները (ֆինանսավորում, տեղեկատվության տրամադրում, ճկուն գրաֆիկ):

3.4. Մասնակցայնություն. Որքանո՞վ եք Ձեզ ներգրավված զգում քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրերի կամ ուսումնական պլանների մշակման գործընթացում:

3.5. Էթիկա և հարաբերություններ. Ինչպե՞ս կգնահատեք քոլեջում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը և փոխադարձ հարգանքը վարչակազմ-դասախոս-ուսանող հարթությունում:

3.6. Որակի ապահովման գործընթացներ. Որքանո՞վ եք տեղեկացված քոլեջում իրականացվող որակի ներքին ապահովման գործընթացներից և Ձեր դերից այդ հարցում:

3.7. Խրախուսման համակարգ. Ինչպե՞ս կգնահատեք քոլեջում գործող դասախոսների խրախուսման և մոտիվացման մեխանիզմները (թե՛ նյութական, թե՛ բարոյական):

3.8. Տեղեկատվական հոսքեր. Որքանո՞վ է ժամանակին և արդյունավետ իրականացվում տեղեկատվության փոխանակումը ամբիոնների և վարչական ստորաբաժանումների միջև:

3.9. Գնահատման օբյեկտիվություն. Որքանո՞վ եք արդարացի համարում Ձեր աշխատանքի գնահատման չափանիշները տնօրինության կողմից:

Բաժին 4. Խնդիրների վերհանում և առաջարկություններ

Այս բաժնում Ձեր անկեղծ դիտարկումները կօգնեն քոլեջին մշակել զարգացման թիրախային ծրագրեր (բաց հարցեր՝ տեքստային պատասխանով):

4.1. Հիմնական խնդիրներ. Խնդրում ենք նշել քոլեջում ուսումնական գործընթացի կազմակերպմանը խոչընդոտող **3 հիմնական խնդիրները** (օրինակ՝ դասացուցակի անհարմարություն, կլինիկական պրակտիկայի կազմակերպման դժվարություններ, տեխնիկական միջոցների պակաս և այլն):

4.2. Բարելավման առաջարկներ. Ինչ կոնկրետ փոփոխություններ կառաջարկեիք իրականացնել քոլեջի գործունեության մեջ՝ **կրթության որակը բարձրացնելու** և ուսումնական միջավայրն ավելի արդյունավետ դարձնելու համար:

4.3. Ռեսուրսների կարիք. Նշեք այն **լրացուցիչ ռեսուրսները** (նյութական, տեխնիկական, մասնագիտական գրականություն կամ վերապատրաստումներ), որոնց անհրաժեշտությունը զգում եք ավելի որակյալ դասապրոցես ապահովելու համար:

4.4. Այլ դիտարկումներ. Այստեղ կարող եք ավելացնել ցանկացած այլ հարց կամ առաջարկ, որը չի ներառվել նախորդ կետերում:

Հավելված 3

ՀԱՐՑԱՇԱՐ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հարգելի՛ գործընկեր, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պետական բժշկական քոլեջը ներկայումս իրականացնում է կրթական ծրագրերի որակի բարձրացման և ինստիտուցիոնալ բարելավման միջոցառումներ: Այս ճանապարհին մեզ համար անկյունաքարային նշանակություն ունի մեր հիմնական շահակիցների՝ գործատուների կարծիքը: Քանի որ Ձեր հաստատությունը հանդիսանում է մեր շրջանավարտների պոտենցիալ գործատուն և առողջապահական համակարգի կարևոր օղակ, խնդրում ենք Ձեզ (կամ Ձեր հաստատության համապատասխան մասնագետներին) մասնակցել կարճ հարցման:

Հարցման նպատակն է՝

- Գնահատել մեր շրջանավարտների պատրաստվածության մակարդակը:
- Վերհանել այն մասնագիտական հմտությունները, որոնց կարիքն ունի ժամանակակից բժշկությունը:
- Լսել Ձեր առաջարկները՝ ուսումնական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին առավել համապատասխանեցնելու համար:

Ձեր օբյեկտիվ գնահատականը հիմք կհանդիսանա մեր քոլեջի զարգացման ռազմավարության և կրթության որակի բարելավման համար:

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում արդյունավետ համագործակցության և բժշկական կրթության որակի բարձրացման գործում ներդրում ունենալու համար:

Բաժին 1. Տեղեկատվություն կազմակերպության մասին

1. **Բժշկական հաստատության անվանումը**_____:
2. **Ձեր պաշտոնը** _____:
3. **Մեր Քոլեջից քանի՞ շրջանավարտ է աշխատում Ձեր հաստատությունում (կամ բաժանմունքում) վերջին 3-5 տարվա ընթացքում**_____:

Բաժին 2. Մասնագիտական գիտելիքների և հմտությունների գնահատում

Խնդրում ենք գնահատել քոլեջի շրջանավարտների պատրաստվածությունը 1-5 բալանոց սանդղակով (1-Շատ վատ, 5-Գերազանց):

2.1. Տեսական գիտելիքներ. Որքանո՞վ են շրջանավարտների տեսական գիտելիքները համապատասխանում ժամանակակից բժշկության պահանջներին:

2.2. Գործնական հմտություններ. Որքանո՞վ են շրջանավարտները տիրապետում անհրաժեշտ մանիպուլյացիաներին և բժշկական սարքավորումների հետ աշխատանքին:

2.3. Արտակարգ իրավիճակներ. Որքանո՞վ են պատրաստ արագ կողմնորոշվել և առաջին օգնություն ցուցաբերել կրիտիկական իրավիճակներում:

2.4. Թվային հմտություններ. Որքանո՞վ են տիրապետում էլեկտրոնային առողջապահական համակարգերին (օրինակ՝ Armed) և համակարգչային գրագիտությանը:

Բաժին 3. Հաղորդակցման հմտություններ (Soft Skills) և էթիկա

Խնդրում ենք գնահատել քոլեջի շրջանավարտների պատրաստվածությունը 1-5 բալանոց սանդղակով (1-Շատ վատ, 5-Գերազանց):

3.1. Հաղորդակցման հմտություններ. Որքանո՞վ են կարողանում պրոֆեսիոնալ և էթիկական նորմերին համապատասխան շփվել պացիենտների և նրանց հարազատների հետ:

3.2. Թիմային աշխատանք. Ինչպե՞ս կգնահատեք նրանց համագործակցությունը բժշկական անձնակազմի այլ անդամների հետ:

3.3. Աշխատանքային կարգապահություն. Որքանո՞վ են հետևում հաստատության ներքին կանոնակարգին և աշխատանքային ժամերին:

3.4. Սովորելու պատրաստակամություն. Որքանո՞վ են ձգտում յուրացնել նոր մեթոդներ և շարունակաբար զարգանալ:

Բաժին 4. Համագործակցություն և Կրթական ծրագրեր

Խնդրում ենք գնահատել քոլեջի շրջանավարտների պատրաստվածությունը 1-5 բալանոց սանդղակով (1-Շատ վատ, 5-Գերազանց):

4.1. Ծրագրերի արդիականություն. Ըստ Ձեզ՝ որքանո՞վ են քոլեջի ուսումնական ծրագրերը համահունչ առողջապահության ոլորտի ներկայիս պահանջներին:

4.2. Հետադարձ կապ. Որքանո՞վ է քոլեջը հաշվի առնում Ձեր (որպես գործատուի) առաջարկները ուսումնական պլանները վերանայելիս:

4.3. Պրակտիկայի արդյունավետություն. Որքանո՞վ է արդյունավետ կազմակերպվում ուսանողների արտադրական պրակտիկան Ձեր հաստատությունում:

Բաժին 5. Խնդիրներ և Առաջարկություններ (Բաց հարցեր)

5.1. Որո՞նք են այն հիմնական բացթողումները, որոնք նկատում եք շրջանավարտների պատրաստվածության մեջ (օրինակ՝ կոնկրետ հմտության պակաս):

5.2. Ի՞նչ նոր դասընթացներ կամ թեմաներ կառաջարկեիք ներառել ուսումնական ծրագրում՝ աշխատաշուկայում ավելի մրցունակ լինելու համար:

5.3. Պատրա՞ստ եք շարունակել համագործակցությունը քոլեջի հետ (աշխատանքի ընդունում, պրակտիկայի տրամադրում, մասնակցություն քննական հանձնաժողովներին):

Հավելված 4

ՀԱՐՑԱՇԱՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պետական բժշկական քոլեջ)

Հարգելի՛ շրջանավարտ,

Խնդրում ենք մասնակցել հարցմանը, որի նպատակն է գնահատել Քոլեջում ստացած կրթության որակը: Ձեր պատասխանները գաղտնի են և կօգտագործվեն միայն կրթական գործընթացի բարելավման նպատակով:

I. Ընդհանուր փվյալներ

4. *Ավարտման տարեթիվը՝ _____*
5. *Կրթական ծրագիրը / մասնագիտությունը՝ _____*
6. *Ներկայումս Ձեր զբաղվածության կարգավիճակը՝*
   - ☐ *աշխատում եմ մասնագիտությամբ*
   - ☐ *աշխատում եմ այլ ոլորտում*
   - ☐ *չեմ աշխատում*
   - ☐ *շարունակում եմ ուսումը*

II. Կրթական ծրագրի և ուսուցման գնահատում

(1՝ լիովին համաձայն չեմ, 5՝ լիովին համաձայն եմ)

4. *Քոլեջում ստացած կրթությունը ինձ տվել է բավարար գիտելիքներ և հմտություններ մասնագիտական գործունեություն սկսելու համար:*
   1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐
5. *Տեսական և գործնական ուսուցման համադրությունը արդյունավետ էր:*
   1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐
6. *Ուսուցումն ինձ տվել է բավարար պատրաստվածություն մասնագիտական հմտություններ ձեռք բերելու համար:*
   1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

III. Դասախոսական կազմ և ուսումնական միջավայր

7. *Դասախոսների մասնագիտական պատրաստվածությունը բավարար էր:*
   1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐
8. *Դասախոսները աջակցող էին և հասանելի ուսանողների համար:*
   1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐
9. *Քոլեջի ուսումնական միջավայրը և նյութատեխնիկական բազան նպաստում էին արդյունավետ ուսուցմանը:*
   1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

IV. Ընդհանուր բավարարվածություն

10. Ընդհանուր առմամբ որքանո՞վ եք բավարարված Քոլեջում ստացած կրթությամբ:

1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐ 5 ☐

11. Կառաջարկեք Քոլեջը այլ դիմորդների:

☐ Այո

☐ Ավելի շուտ այո

☐ Ավելի շուտ ոչ

☐ Ոչ

V. Առաջարկներ

12. Ձեր առաջարկները կամ դիտարկումները կրթական ծրագրի և ուսուցման բարելավման վերաբերյալ